գիրը— Ա. Վռամեան:

Քանի՜ անգամ նոյն այս երջանիկ հողի վրայ երազել ենք միասին, զուրգուրել ենք միասին հայրենաշէն ծրագիրներ:

Հայաստանն էլ գեղեցիկ է եւ նոյնիսկ աշխարհի մեծանուն բանաստեղծներից մինը — Լամարտին — անուանել է այն «Արեւելքի Զուիցերիա»...:

Վասպուրականն էլ գեղեցիկ է, հրապուրիչ է Հելվետիայի պէս,— եւ այնտեղ, Վասպուրականի մէջ ծաւալել էր Վռամեանը իր կուլտուրական աշխատանքը — այնքա՜ն խանդով ու յափշտակութեամբ — այնտեղ նա ձգում էր խարիսխները ապագայ հայրենիքի, երբ դահիճը խորտակեց նրա շինարար բազուկը կէս ճամբուն...

Քանի՜ այդպիսի խորտակուած բազուկներ վերջին մի քանի տարուայ ընթացքում...

Ցուշերը կուտակուում են ուղեղիս մէջ, կաշկանդում են ձեռք ու գրիչ: Ինչպէ՞ս գրել... Վաղն էլ միւսների դամբանականները... Ակնունիի, Զարդարեանի, Վարդգէսի, Զոհրաբի, Խաժակի, Հրաչի, Շահրիկեանի, Սարգսի, Սիմանթօի, Վարուժանի, Շահպազի, Գալֆայեանի, Գեղամի, Ստեփանեանի (Բալաչա), Փիլոսի եւայլն եւայլն: Բոլորն էլ համեստ ու ազնիւ առաքեալներ ժողովրդական մեծ դատի, բոլորը լծուած մի հսկայ, սիզիֆեան աշխատանքի մէջ, բոլորը տոգորուած Հայաստանը եւ Թուրքիան վերածնելու տենչանքով...

Կարծրացի՜ր, հա՛յ կենսագրող, ժանգ ու սառոյց հաղորդիր նեարդերիդ, պողպատ դարձրու լալկան սիրտդ եւ մտի՛ր, խո՛ր թափանցիր հայկական ծովածաւալ մարտիրոսութեան խորշերի մէջ, ուր տանջանքը բիւրաւոր երանգ ունի, ուր արիւնը այնքան յորդ է, վերքերը այնքան ցնցող, ուր, սակայն, դուն կը գտնես — արիւնագոյն գետերի մէջ— եւ անհուն գանձեր, սփոփիչ, սրտապնդող, անհաշիւ ազամանդներ, որոնցով պիտի զարդարուի մեր վերածնութեան դժնդակ պատմութիւնը, մեր ապագայ Հայրենիքը:

Մեռելների հոգիներն են դրանք, որոնք երբեք չեն մեռնի, չեն մաշուի ժամանակի կործանարար ալիքների մէջ, այլ կը մնան անմատչելի, խորհրդաւոր բարձունքներում, կը շարունակեն տիւ եւ գիշեր կառավարել մեզ ողջերիս, ընթացք տալ մեր խոհերին ու տենչերին, ոգեւորել սերունդները, կոչել նրանց դէպի վրէժ ու հատուցում, դէպի ճիշդ ու հերոսութիւն, դէպի անդուլ, ստեղծագործ աշխատանք...

Շարժի՛ր գրիչդ, խեղճ, սգաւոր օրագրող, որ տխուր բախտ ունեցար վերապրելու հաբիւրաւոր մտերիմ ընկերներիդ: Շարժի՛ր թոյլ գրիչդ, որ հաղորդես յետնորդներին դէթ մի քանի դիմագծերը այն նահատակ գործիչների, որոնք մեռան վաղաժամ, որպէսզի ապրի Հայաստանը:

* * *

Անցեալները, կը զրուցէի մի հին ընկերոջ հետ: «Դաշնակցութեան» անդրանիկ առաքեալն է Տրապիզոնում ու Կ. Պոլսում: «Երկիր» է մտել 1890–ին, քարոզել է երկար տարիներ մթին ներքնայարկերում, պատրաստել է հերոսների առաջին փաղանգը սուլթանական մայրաքաղաքում: Բարգէն, Գնունի, Վռամեան, Մխսաքեան, Անդրէասեան, Վարդգէս, Եղիպտացի,— բոլորն էլ նրա մկրտուածներն են: Ապրում էր այն ժամանակ — գրեթէ ինվալիտ — զուիցերիական Լօզանի մէջ եւ մելամաղձով արտասուում էր քառորդ դարու արհաւրալի ու սխրալի անցեալը:

Հարցնում եմ Վռամեանի մասին, կ'ուզեմ իմանալ առաջին յեղափոխական քայլերը այն մարդուն, որ դարձաւ յետոյ հայոց մեծ կուսակցութեան մեծագոյն գործիչներից մինը:

Մի վայրկեան լիշողութիւնը քրքրելուց յետոյ, այսպէս է պատասխանում Յովհաննէս Իւսուֆեանը.

... «1894–ին, մի օր, ըստ սովորութեան, գնում եմ Ռ... փոստը (Կ. Պոլսում) նամակներս ստանալու: Հազիւ մի քանի քայլ հեռացած՝ տեսայ եռեւս կարճահասակ մի երիտասարդ, փոստալի ծառայողներէն մինը, որ շտապ քայլերով մօտեցաւ ինձ եւ խորհրդաւոր ձեւով յայտարարեց.

«Պարո՛ն, ձեզի կը լրտեսեն, ես այդ հաստատ գիտեմ... Դուք կասկածելի նամակներ